

ՊՐ. ԱԻԵՏԻՍ ԱՆԱՐՈՆԵԱՆ

ՄՈՒՐԱՏ ԲԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Երկրորդ օրը Մայիս մեկն էր. բան-
ւորական դասակարգը նուանդական գա-
ղափարներով հպարտ, հանդիսօրէն կը

Հայ Հանրապետութեան խորհրդարանի
Նախագահը, իր ազնուափայլ Տիկնոջ
և իր քարտուղար Բրոֆ. Սիմոն Բակո-
բեանի հետ կը մտնէն նաւակ և կ'ուղ-
ղուին դէպի Վարժարան: Հոս ընդառաջ
կ'ելլեն բոլոր վարդապետները և աշա-
կերտները. իսկ Բատուայի Հայ Ուսանո-
ղաց Միութեան կողմէ կը ձօնուի Տիկ.
Նուարդին գեղեցիկ ծաղկեփունջ մը՝ հայ-



Պր. Նախագահը աշակերտաց մականկով կը հասնի Մուրատ-Բափայէլեան Վարժարան:

շարաթանար: Նաւամատոյցին կապուած
Գոնդոլներն, փայլուն կացիններով, պա-
րաւորներու պէս կ'որորուէին, շորորուէին,
դոփելով շարժում ջրի երեսին: Ոչ ոք
ուզեց կոտրել հանգիստը: Հարկ եղաւ
հեռախօսով կոչել Մուրատ — Բափայէլեան
սաները, որոնք իրենց կարկուրայով, Նա-
ւագի զգեստներով փաղփուռ, սուրհանդակի
երազույթեամբ հասան Գանիէլի հիւրանոցի
առջև ըրտնաթոր: Կեանքը և կայտառու-
թիւնը կը կաթէր կարմիր երեսներէն:

կական եռագոյն ժապաւէններով հանգու-
ցուած:

Հիւրերը կ'առաջնորդուին դէպի փա-
ռագարդ դահլիճը՝ ուր աշակերտները կ'եր-
գեն յոտնկայս «Բամ... փորտան»ը,
Հայ անկախութեան և վերածնութեան
քայլերգը. ինչպէս նաև «Մեր Հայրենիք»ը,
ևայլն: Իսկ աշակերտներու այլ խումբ մը՝
կը նուագէ ընտրանօք կոմիտաս վարդա-
պետի գեղեցիկ երգերէն ոմանք՝ ընկերակ-
ցութեամբ դաշնամուրի, ջութակի և սրնգի:

Բարի գալուստի մաղթանքները կ'ուղղէ մեծաշուք հիւրերուն՝ Վարժարանի Տեսուչ Վ. Հ. Վարդան Հացունին, ու հիացումով և խանդավառութեամբ կ'ողջունէ առաջին այցելութիւնը ազատ Հայ Պետութեան ներկայացուցիչին։ Յետոյ յառաջ կ'անցնի ուսանող Պր. Մանուկ Խանպէկեան՝ և յայտնեց իր անսահման ուրախութիւնը այդպիսի եզակիան այցելութեան մ'առթիւ, կը յիշէ մեծ բանաստեղծին ունեցած մեծ դերը Հայ

բոլոր մաղթանքներուն՝ յուզիչ և սրտեռանդն ճառով մը. ուր ի միջի այլոց յիշեց բովանդակ Հայութեան դիւցազն նկարագիրը, մեր հերոս զինուորներուն անվերջանող քաջութիւնը որ առիւծանման կը մարտնչին 7 տարիներէ ի վեր, իրենց դէմ եղած տասնապատիկ թշնամիներուն հետ։ Յիշեց որ մեր այս զինուորներն և ժողովուրդը՝ իրենց արիւնով և զոհողութեամբ կերտեցին Ազատ Հայաստանը, ու յաւելցուց որ Տաճկահայր և Ռուսահայր հաւասարապէս կռուեցան, իրենց երկուքին արժանիքը մեծ և անսահման է։ Եւ ի վերջոյ ողջունեց և մաղթեց միացած տեսնել Երևանի Հանրապետութեան կողքին՝ Վան, Պրիթլիս, Մուշ և Էրզրումը...

Որոտնդոստ և բուն ծափեր՝ արծազանգը եղան բանաստեղծ Նախագահին հոգեբուխ խօսքերուն։

Հանդէսը ուրիշ հրեայթ մ'առաւ ճաշարանին մէջ՝ ուր սեղանները զարդարուած էին ծաղիկներով։ Ամենուն սրտին մէջ կար նորօրինակ հրճուանք մը, արտակարգ ուրախութիւն մը... Կարծէք թէ Հայաստանի Թագաւորութեան ժամանակի հանդէսներուն կրկնութիւնն ըլլար։

Հայ զինուորի յիշատակին կրկին «Քամա... փորոտանը» յոտնկայս երգուեցաւ. ո՞վ գիտէ ասոր ճեղինակ անմահ Ալիշանի ոսկերոտիքը ի՞նչպէս խայտացին այս առթիւ...

Բաժակաճառերու սկիզբ տուաւ Հ. Սահակ Վրդ. Տէր Մովսէսեան, որ հոգեռանդն և կորովի ուղերձ մ'ըրաւ Նախագահին. յիշեց Մխիթար Աբրահամ և իր հիմնած Միաբանութեան ունեցած մեծղի դերը Ազգային անկախութեան գործին մէջ, և յայտնեց այն հռանդը որ կը վառէ իւրաքանչիւր հայու սիրտը՝ վերադառնալու շուտով Հայրենիք՝ վերաստեղծելու համար զայն խաղաղ աշխատանքով Հայկական Հանրապետութեան հովանիին տակ։

Գիշ վերջ կանգնեցաւ Պր. Պետրոս Պապիկեան, որ յանուն Խաւիխոյ Հայ Ուսանողաց Միութեան, խօսեցաւ սրտաւոյզ ճառ մը. յայտնեց Հայ երիտասարդութեան անշէջ փափաքը շուտով



Կը ձօնուի Տիկ. Նուարդիթ գեղեցիկ ծաղկեփումը մը.

անկախութեան գործին մէջ և կը խոստանայ որ արտասահմանի և մանաւանդ Խաւիխոյ Հայ երիտասարդութիւնը սիրով պիտի վերադառնայ Հայաստան՝ իր հայրենիքը վերաշինելու համար։

Իսկ աշակերտներու կողմանէ՝ երկու պատանիներ կը կարդան արտաշարժ և գեղեցիկ մաղթանքներ, Վարժարանին մէջ պատասպարուած որբերուն բոլոր հայրենասիրական զգացումները պարզելով դէպ ի Հայրենիքի ազատարարները։

Պր. Ահարոնեան կը պատասխանէ այս

վերադառնալու Հայաստան և նուիրուիլ բուրովին զայն վերաստեղծելու և վերականգնելու գործին: Ապա Պր. Պետրոս փրկյապետեան կարդաց հետեւեալ ուղերձը.

Օ՛ն բարձրացուր հակառդդ վեհ աղբըսն
Երազներու ապագային խոհերով,
Օ՛ն բարձրացուր հակառդդ վեհ և խելոգի՝
Ժողովուրդն է երեսդ ի վեր կը ժողովի:

Ի ԺՈՂՈՎՈՒՐԻՒՆ ԼՆԵՐՈՍԻՆ



Այրարատի բարձունքներէն յաղթական
Սըրբազան հուրն՝ ծրարած լանջքիդ տակ, ահա՛
կ'ընեա, հողին՝ դիպազնական հայութեան,
Փառքի ներսս, ո՛վ մըտածման մեծ նշակայ.

Խորհրդաւոր լուսթիւն մը և ամփոփ
հետաքրքրութիւն մը պատեց բազմական,
նէրը, երբ ոտքի ելաւ Պր. Նախագահը:
Ուշադրութիւնները և նայուածքները սեւ-
ռեցան իր վրայ, լսելու իրմէ գեղեցիկ և
մխիթարական խօսքը: Եւ բանաստեղծը
խօսեցաւ. ու պատմեց դարձեալ հայ ազգին



Խմբամկար Մուրատ-Բափայէլիամ վարժարանի Պարտիզիմ մէջ.

Արեւն աբցունց մեր ներքածակ մայրերուն
Ոստիւն զէմ բոքն հողիդ վնեցին,
Ու վրէժի սէրն մեր ողջախոհ կոյսերուն՝
Ճակտիդ վրայ շընորքն իրենց ցուցին:

Հըպարտօրէն պիտի պատմենք աիեզիրքի,
Թէ որքերուն խոր նայուածքին մէջ, զիշէր,
Անեղծ գութի լոյս - ծխածան ջրանցիւր,
Տաւարներու դերբուկին մէջ՝ արեւներ:

Գրեիքդ տակ անլոյծ խանգով ակադան,
Մաղկեցուցիր երգը Յեղին տարազիւր.
Սէրն ամեթխած մեր կուսագեղ հարսերուն՝
Ինկած ասաղիքն, երկինքնուս վրայ կախեցիր:

և ժողովուրդին անխորտակելի կամքը և
անդիմադրելի եռանդը դէպի իր անկախու-
թիւնը: Յայտնեց ազատ Հայրենիք մ'ու-
նենալու փառքը և ուրախութիւնը, յիշեց
հայ ժողովուրդի յամառ և տոկուն կամքը
աշխատութեան մէջ. անոնք դարերով
պահներ են Արեւելք և իրենց հայրենի վա-
ռարանները. հայեցէք Հայի ազգանունները
բոլորը կը յայտնեն որ այլ և այլ արուեստի
կիրառութենէն ընդունեն են. և խնդրեց
իւրաքանչիւրին մասնակցութիւնը և ա-
ջակցութիւնը Հայրենիքի վերաշինութեան:

Աղմկալից ծափեր և բաժակախառնումներ յաջորդեցին վերջին խօսքերուն. ներկաներուն սրտերը խանդավառուած էին. երգ մը, երգ մը պէտք էր որ զովանցէր պապականւած և սիրատոշոր սրտերը... և իսկոյն երգուեցաւ «Մեր Հայրենիքը»... այն անմահ երգը որ բիրաւուր Հայ զինուորներու առաջնորդած էր դէպի կոփւ, դէպի յաղթանակ, դէպի ազատութիւն...:

Իրիկուն արևը դեռ մարը չի մտած՝ հիւրերու վերադարձին իրենց պանդոկը, դարձեալ վարժարանի կտրին նաւազ աշակերտներն թիավարելով տարին մինչև պանդոկը: Կը հռնանար Պր. Նախագահը վարժարանէն, բայց կը թողուր անմահ ունալի օրուան մը գեղեցիկ յիշատակը...:

ՄԻՀԵԱՆ ՇԵՆԿԵԱՆ

Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Ի Օ Ր Ը



Մայիսի 2 Կիրակի առաւօտ արտակարգ գնացքով կը փութար մեկնելու Պարոն Նախագահը դէպի Փարիզ. ի կայարան ընկերելու եկած էին իրենց նաւկով և նաւազի զգեստներով վարժարանի

հաստատուած է իր ծովային մեծ զօրութեան վրայ:

Կայարան եկած էին Մխիթարեան Հայրերն և Հայ Ուսանողական խումբը: Սիբալիւր հրաժեշտի ողջոյնները փոխադարձ



սաները: Նաւամատոյցի վրայ կանչեց զանոնք իր մօտը, հայրօրէն քաջալերեց զիրենց ուսանիլ և պատրաստուիլ Ազատ Հայաստանի տրմիղին և Նաւային լինկերութեանց մէջ քաջ նաւաստինիւր հանդիսանալու, օրինակ առնելով Անգլիական ազգը, որուն մեծութիւնը և հարստութիւնը

մատուցանելէ զկնի, երբ գնացքը սկսաւ շարժիլ, ողջերթի ցնծալից ծափերուն խառնուեցաւ Հայ գաղութի սրտի արծազանգն. կեցցէ՛ Պարոն Նախագահը, կեցցէ՛ Հայկական Հանրապետութիւնը:
